ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 183 - Ա 18 մարտի 2022 թ.

ՄԿՐՏԻՉ ՍԱՖԱՐՅԱՆԻ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի «ՄԿՐՏԻՉ ՍԱՖԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 133-Ա ՀՐԱՄԱՆՆ ԱՆՓՈՓՈԽ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 11-րդ մասի և 14-րդ մասի 2-րդ կետի դրույթներով ու հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին հասցեագրված Մկրտիչ Սաֆարյանի (ՀայՓոստ-ով 03.03.2022թ առաքված) մտից Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան 07.03.2022 թվականի Ն/752-2022 բողոք-առարկությունն՝ իր նկատմամբ կիրառված կարգապահական տույժը հանելու վերաբերյալ քննարկումը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2022 թվականի մարտի 1-ի N 133-Ա հրամանի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնի պետ Մկրտիչ Սաֆարյանի 2022 թվականի մարտի 3-ի բերված բողոքը մերժել, և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2022 թվականի մարտի 1-ի «Մկրտիչ Սաֆարյանի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու մասին» N 133-Ա հրամանը թողնել անփոփոխ:

18.03.2022

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Digitally signed by SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ